



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ  
Տ. ԳՅՈՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԳԱՇՅԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԻՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԳԱՇՅԱՆԻՆ,  
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԱՅՈՑ ՓԱՐԻԶԻ ՇՐՋԱՆԻ,  
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՓԱՐԻԶ

Բարին Աստուած միշտ իր հովանու տակ է պահպանում մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին, որ հաւատարիմ իր պատմական առաքելութեան, մնում է մայր դաստիարակը մեր հաւատաւոր ազգի, ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Մենք երջանիկ ենք, որ նաև Ֆրանսիայում, հայոց եկեղեցիները ջէն ու գործօն վիճակում, շարունակում են իրենց հոգեշէն սպասաւորութիւնը և վերջին շրջանում լծուած են իրենց կրօնական համայնքային կեանքը առաւել ամուր հիմքերի վրայ կազմակերպելու աշխատանքին:

Այդ կազմակերպչական գործունէութեան առաջին կարևոր արտայայտութիւնը եղաւ Ձերդ Սրբազնութեան ընտրութիւնը իբրև առաջնորդ հայոց Փարիզի շրջանի, համաձայն այդ շրջանի Կրօնական Ընկերակցութեան կանոնագրութեան տրամադրութեանց:

Սոյն Մեր կոնդակով ուրախ ենք հաստատելու և շնորհաւորելու Ձեր ընտրութիւնը, մաղթելով ի սրտե, որ Տէրը Ձեզ պարզևի եկեղեցանուէր աշխատանքի երկար տարիներ, շինարար բեղուն արդիւնատրումով:

Մենք վստահ ենք, թէ մօտ ապագայում վերակազմակերպչական աշխատանքները ի կատար պիտի ածուեն նաև Լիոնի և Մարսելլի շրջաններում, որով Ֆրանսիայի երեք շրջանները պիտի ունենան իրենց եկեղեցական վարչական կառոյցը, համապատասխան բարեփոխուած կանոնագրութիւնների, ի գլուխ ունենալով իրենց շրջանների վիճակատր եպիսկոպոսներին:

Ինչպէս ծանօթ է Ձեզ, Մեր նախատեսումն է, որ Փարիզի, Լիոնի և Մար-



սեյի շրջանների պատգամաւորները կազմեն Ֆրանսիայի թեմական պատգամաւորական ժողովը, որը պէտք է ընտրի ամբողջ Ֆրանսիայի թեմակալ առաջնորդին և թեմական խորհուրդը, համաձայն յատուկ մի կանոնագրութեան նախատեսութեանց, որը պիտի կոչուի «Կանոնագրութիւն Ֆրանսիայի Հայ Առաքելական Եկեղեցու Թեմական Կազմակերպութեան»:

Մենք կարծում ենք, որ սոյն թեմական կազմակերպութեան կառույցը իր վերջնական ձևը կը գտնի առաջիկայ մի տարուայ ընթացքում:

Մինչ այդ լիազօրում ենք Ձերոյ Սրբազնութեանը ժամանակատրապէս վարելու Ֆրանսիայի և Արևմտեան Եւրոպայի եկեղեցական ընթացիկ գործերը, Փարիզի հանգուցեալ հայրապետական պատուիրակի փոխանորդի հանգամանքով, սերտ ու համերաշխ գործակցութեամբ Մարսէյի և Լիոնի վիճակների Գերաշնորհ Տ. Յակոբ և Տ. Նորվան սրբազան եպիսկոպոսների:

Մնում ենք աղօթող, որ Ֆրանսիայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու թեմական կազմակերպութիւնը շուտով կը հաստատուի եկեղեցական կանոնական ամուր հիմքերի վրայ, համաձայն ժողովրդավարական սկզբունքների և կրօնական դաստիարակութեան վերաբերեալ ձեր երկրի օրէնքների:

Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձերոյ Սրբազնութեանը Մեր գնահատանքը և հայրական սէրը, ինչպէս և Մեր օրհնութիւնները համայն ֆրանսահայ մեր հաւատացեալ վարակներին:

«Եւ արդ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ և բանի շնորհաց նորա, որ կարողն է շինել և տալ ձեզ ժառանգութիւն ընդ սուրբսն ամենեսեան» (Գործք առաք. Ի 32): Ամէն:

*Կապույտ Դ.*

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 5 Յուլիսի  
1984 Փրկչական ամի,  
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԳ  
ի սայրավանս Սրբոյ Էջմիածնի:  
Հմր. 1271

